

խատաւորները Եկեղեցիները արտաքուստ միայն բարելաւել, այլ եւ հարկ տեսան սրբել մաքրել ի ներքուստ: Կապտուած կողոպտուած էր Տաճարը իւր սրբազան արդուզարդերէն. մէկ կողմէն ժամանակի աւերիչ ձեռքը գործած էր հոն աւերներ, միւս կողմէն այլադէն անոպայ ասպատակաւորներ պղծած էին անոր նուիրական խորանները, եւ հուրի ու սուրի արհաւիրքին տակ ահաբեկած հովիւն ալ, հօտն ալ: Սանգարուած էին հնաւանդ կարգերը, մոռցուած էին նախնեաց հոգեշունչ երգերը, պաշտամանց մեծաշուք հանդիսակատարութիւնները լռած. կը բեմադրուէր այն տոհմիկ մեծապայծառ արարողութիւններու անհրապոյր կմախքը միայն, որ իւր անշքութեան մէջ հեգնանք մըն էր հնաշէն դմբեթներու:

Եկեղեցիներու ներքին պայծառութիւնը, հանդիսակատարութեանց փայլը, մեղեդիներու եւ երգերու ներդաշնակ երգեցողութիւնը ոչ միայն աստուածային նկարագիր պիտի ապրին խորհուրդներու եւ խորհրդականներու մատակարարութեան, այլ եւ պիտի զարթեցնէին բարեպաշտական զգածումներ համախմբուած ունկնդիրներու մէջ վերացնելու բարձրացնելու զանոնք մտքով վերին եթերներ, հոգեխառնելու հրեշտակաց հետ Ամենաւակալին գահոյքին շուրջը:

Առ այս ձեռնարկուեցաւ կանոնաւորել աղօթից ժամերը, կաղմակերպել երգեցիկ խումբ եւ արարողութիւններու ճշգրիտ պահ-